# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

## Կազմված «Գնումների մասին» օրենքից

*Հարց 1*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է՝

պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները.

/«Գնումների մասին» օրենքի 1-ին հոդված/

*Հարց 2*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ո՞րն է օգտագործվող «հատուկ կամ բացառիկ իրավունք» հասկացության սահմանումը՝

իրավունք, որը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը.

/«Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդված, 1-ին մաս, 15-րդ կետ/

*Հարց 3*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

/«Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ/

*Հարց 4*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝

գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

/«Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդված, 2-րդ մաս, 1-ին կետ/

*Հարց 5*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից և իրավական այլ ակտերից:

/«Գնումների մասին» օրենքի 4-րդ հոդված/

*Հարց 6*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝

ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից գնահատման կարգը.

/«Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդված, 1-ին մաս, 13-րդ կետ/

*Հարց 7*

Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել՝

միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար.

/«Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 8*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանելու դեպքում միաժամանակ ներկայացվում են՝

այդ տեղեկության վավերապայմանները.

/«Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 9*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող քանի՞ օրվա ընթացքում է պատվիրատուն կազմում գնման ընթացակարգի արձանագրություն՝

երեք աշխատանքային օրվա ընթացքում.

/«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 10*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պետական բյուջեի և պետական բյուջեից դրամաշնորհի, այդ թվում՝ սուբվենցիայի ձևով հատկացվող միջոցների հաշվին գնման պայմանագիր կնքելուց կամ գնման գործընթացը չկայացած հայտարարվելուց հետո քանի՞ օրվա ընթացքում է պատվիրատուն լիազորված մարմին ներկայացնում հաշվետվություն՝ գնման գործընթացի մասին.

յոթ աշխատանքային օրվա ընթացքում.

/«Գնումների մասին» օրենքի 9-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 11*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց.

հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

/«Գնումների մասին» օրենքի 9-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 12*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող՝

առաջին աշխատանքային օրը.

/«Գնումների մասին» օրենքի 11-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 13*

Եթե հայտնաբերվում է մասնակցի կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցչի գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական արարք, ապա դրա ի հայտ գալու օրը պատվիրատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է՝

իրավապահ մարմիններին.

/«Գնումների մասին» օրենքի 12-րդ հոդված/

*Հարց 14*

Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝

բացառելով տարակերպ մեկնաբանությունը.

/«Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 15*

Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված.

միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա.

/«Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 16*

Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն և ռուսերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախաորակավորման հայտարարությունները՝ նաև.

անգլերեն.

/«Գնումների մասին» օրենքի 14-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 17*

Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը համակարգում է գնումների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները և ընդունում կամ ներկայացնում է դրանք.

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

/«Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդված, 2-րդ մաս, 1-ին կետ/

*Հարց 18*

Գնումների համակարգող ստորաբաժանման աշխատակիցները, պաշտոնատար և հրավիրված անձինք պետք է ընդգրկված լինեն լիազորված մարմնի կողմից հրապարակվող՝

գնումների որակավորված համակարգողների ցուցակում:

/«Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 19*

Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն՝

առնվազն յոթ օրացուցային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

/«Գնումների մասին» օրենքի 22-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 20*

Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

/«Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ/

*Հարց 21*

Խորհրդատվական ծառայության, երկու փուլով մրցույթի կամ փակ նպատակային մրցույթի կիրառման դեպքում նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը՝

առնվազն 15 օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից.

/«Գնումների մասին» օրենքի 24-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ կետ/

*Հարց 22*

Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը.

/«Գնումների մասին» օրենքի 25-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 23*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվող գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտավոր են հանձնաժողովի ողջ գործունեության ընթացքում՝

պահպանել հայտերով ներկայացված տեղեկությունների գաղտնիությունը

/«Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 24*

Պատվիրատուի հետ պայմանագիր կնքնելու նպատակով գնումների գործընթացին մասնակիցն իրավունքն ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց՝

առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում:

/«Գնումների մասին» օրենքի 29-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 25*

Պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու իրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝

հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում.

/«Գնումների մասին» օրենքի 29-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 26*

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝

պատվիրատուի կողմից.

/«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 27*

Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է՝

գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը.

/«Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 28*

Գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝ անբարեխիղճ մրցակցության հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրավասու մարմինը համագործակցում է՝

լիազոր մարմնի և պատվիրատուների հետ.

/«Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 29*

Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝

հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

/«Գնումների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 30*

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվում է՝

առնվազն 15 օրացուցային օր՝ հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից.

/«Գնումների մասին» օրենքի 40-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 31*

Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութնասունապատիկը, ապա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվում է՝

առնվազն տասն օրացուցային օր՝ հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից.

/«Գնումների մասին» օրենքի 40-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 32*

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք՝

նույն օրը հրապարակվում են տեղեկագրում.

/«Գնումների մասին» օրենքի 40-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 33*

Էլեկտրոնային աճուրդի փուլերի իրականացման ընթացքում պատվիրատուն չի հրապարակում՝

գներ ներկայացրած մասնակիցների ինքնությունը:

/«Գնումների մասին» օրենքի 41-րդ հոդված, 6-րդ մաս/

*Հարց 34*

Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է՝

բաց կամ փակ նպատակային մրցույթի ընթացակարգով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով, եթե նշված օրենքով այլ բան նախատեսված չէ:

/«Գնումների մասին» օրենքի 43-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 35*

Ընտրված խորհրդատուն կարող է որոշվել նաև այն խորհրդատուին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանին (պայմաններին) հրավերով սահմանված կարգով տրված`

գործակիցների հանրագումարն ամենաբարձրն է

/«Գնումների մասին» օրենքի 44-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 36*

Ընտրված խորհրդատուի հետ կարող են վարվել բանակցություններ գնման պայմանագրի նախագծի դրույթների վերաբերյալ, սակայն դրանք չեն կարող`

հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը«

/«Գնումների մասին» օրենքի 45-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 37*

Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի

գործողությունները (անգործությունը) և որոշումները.

/«Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդված, 1-ին մաս/